

Արձանագրություն №1/2014-2015

«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2014թ. սեպտեմբերի 25-ին տեղի ունեցած թիվ 1 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 60-ը (վաթսուն):
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. ԵՊՀ գիտական խորհրդի 2014-2015 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ժամանակացույցի հաստատում: (Ձեկ.՝ գիտքարտուղար Մ. Ա. Սողոմոնյան):
2. 2015-16 ուստարվա բակալավրիատի ընդունելության մասնագիտությունների ցանկի հաստատում (Ձեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյան):
3. ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Ձեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):
4. ԵՊՀ կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնի կանոնադրությունը հաստատելու մասին: (Ձեկ.՝ պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան)
5. Երևանի պետական համալսարանի, ասպիրանտի/հետազոտողի/ և գիտական ղեկավարի միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևանմուշի հաստատում: (Ձեկ.՝ պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան)
6. Հաղորդում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի իրականացման 2013/14 ուստարվա 2-րդ կիսամյակի և 2011-14թթ. արդյունքների մասին (Ձեկ.՝ հետքուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Ա. Աղասյան):
7. 2014-15 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում (Ձեկ.՝ Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):
8. Ընթացիկ հարցեր
 1. ԵՊՀ ձեռներեցության զարգացման կենտրոն ստեղծելու մասին: (Ձեկ.՝ պրոռեկտոր Ռ.Մարկոսյան)
 2. ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի անվանափոխության մասին
 3. Շնորհավորանքներ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Ավագյանի 70-ամյա հոբելյանի կապակցությամբ:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին.** – ԵՊՀ գիտխորհրդի 2014-15 ուստարվա 1-ին կիսամյակի ժամանակացույցը հաստատելու մասին: Գիտքարտուղար Մ. Սողոմոնյանը ներկայացրեց գիտական խորհրդի նիստերի 2014-15 ուստարվա 1-ին կիսամյակի ժամանակացույցը և առաջարկեց հաստատել այն:

Արտահայտվեցին. – Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ասպիրանտ Կ. Աբգարյանն առաջարկեց 1-ին կիսամյակի ժամանակացույցում ընդգրկել ԵՊՀ ուսանողների կրթաթոշակների բարձրացման հնարավորության քննարկման հարցը: Ռեկտոր Ա. Միմոնյանն առաջարկեց խնդրի առնչությամբ հանդես գալ առաջարկով:

Որոշեցին. – Հաստատել ԵՊՀ գիտխորհրդի նիստերի 2014-15 ուստարվա 1-ին կիսամյակի ժամանակացույցը:

2. **Լսեցին.** - **2015-16 ուստարվա բակալավրիատի ընդունելության մասնագիտությունների ցանկի հաստատում:** Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը ներկայացրեց մասնագիտությունների ցանկը՝ նշելով, որ նախորդ ուստարվա փորձից ելնելով ընթացիկ ուստարում նպատակահարմար չի համարվում բացել <<թարգմանչական գործ. իսպաներեն-հայերեն լեզուներ>> մասնագիտությունը: Ա. Գրիգորյանը նաև նշեց, որ մի շարք մասնագիտությունների գծով՝ կենսաբանություն, կենսաքիմիա, դեղագիտություն, հոգեբանություն, մշակութաբանություն և արվեստաբանություն, կատարել ընդունելության թեթևացում՝ մեկական առարկայից արդյունք համարելով դպրոցում հանձնված քննության արդյունքը:

Արտահայտվեցին. – Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը և աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ. Գրիգորյանը հետաքրքրվեցին բուհերում ընդունելությունն առանց քննությունների անցկացնելու հեռանկարի մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը, համաձայնելով այդ հեռանկարի հիմնականում դրական կողմերի հետ, նշեց, որ առայժմ գործնական նախաձեռնություններ չկան:

Որոշեցին. – 2.1 Հաստատել 2015-16 ուստարվա բակալավրիատի ընդունելության մասնագիտությունների ցանկը:

3. **Լսեցին.** – ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը նշեց, որ կանոնակարգում կատարվող փոփոխությունները բխում են բարձրագույն և հետբուհական կրթության մասին օրենքում վերջերս տեղ գտած փոփոխությունների պահանջից, ըստ որի, եթե նախկինում ուսման վարձերի զեղչման հիմքում ընկած էր վճարովի համակարգում ընդգրկված ուսանողների

10 տոկոսանոց մասնաբաժնի չափանիշը, ապա այժմ ավելանում է նաև մուծվող վարձավճարների 7 տոկոսանոց մասնաբաժնի հանգամանքը: Ա. Գրիգորյանը մատնանշեց հիմնական փոփոխությունները :

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Սիմոնյանը, դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Ա. Ալեքսանյանը:

Որոշեցին. – հաստատել ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը՝ նոր խմբագրությամբ :

4. Լսեցին. ԵՊՀ կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնի կանոնադրությունը հաստատելու մասին: Պրոռեկտոր Գ. Գևորգյանը ներկայացրեց կենտրոնի ստեղծման դրդապատճառները, որը դրամաշնորհային ծրագրի շրջանակներում միտված պետք է լինի կիրառական հետազոտությունների իրագործմանը: Գ. Գևորգյանը ներկայացրեց նաև կանոնադրության հիմնական դրույթները :

Արտահայտվեցին. – Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Ա. Ավագյանը և ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի պատվավոր վարիչ Դ. Սեդրակյանը տարակուսանք հայտնեցին <<գերազանցություն>> եզրի կապակցությամբ: Գ. Գևորգյանը, հասկացության բացատրման հետ մեկտեղ նաև նշեց, որ բառը ամրագրված է եղել նաև դրամաշնորհի դիմելու ժամանակ և նման անվանումը նախապայման է:

Որոշեցին. – 1. Ստեղծել ԵՊՀ կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնը :

2. Հաստատել կենտրոնի կանոնադրությունը :

5. Երևանի պետական համալսարանի, ասպիրանտի/հետազոտողի/ և գիտական ղեկավարի միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևանմուշի մասին: Պրոռեկտոր Գ. Գևորգյանը կարևորեց նման պայմանագրի առկայությունը և դրա գործադրումը հետազոտող-ղեկավար հարաբերություններում երբեմն տեղի ունեցող թյուրըմբռնումների, պարտականությունների չկատարման դեպքերը բացառելու տեսանկյունից: Գ. Գևորգյանը ներկայացրեց առաջարկվող պայմանագրի դրույթները :

Արտահայտվեցին. – Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Ա. Ալեքսանյանը պնդեց, որ ղեկավարը չպետք է այս տեսակ իրավահարաբերության կողմ հանդիսանա, որ ղեկավարի պարտականություններն արդեն սահմանված են այլ իրավական ակտերով: ԻԿՄ ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը առաջարկեց պայմանագրի փոխարեն տվյալ հարցերի կարգավորմանն ուղղված հանձնարարականի ձևանմուշ մշակել և տրամադրել ստորաբաժանումներին՝ այդ հանձնարարականի դրույթներով առաջնորդվելու համար: Ռեկտոր Ա. Սիմոնյանը առաջարկեց հարցը հետաձգել մինչև համապատասխան հրահանգչական գրի նախագծի կազմումը :

Որոշեցին. –

1. Դադարեցնել հարցի քննարկումը:

6. **Լսեցին.** - Հաղորդում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի իրականացման 2013/14 ուստարվա 2-րդ կիսամյակի և 2011-14թթ. արդյունքների մասին: Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Աղասյանը նշեց, որ կրթական կառուցամասի ունկնդիրների թիվը եղել է 2023-ը, ներկայացրեց նաև ունկնդիրների թվերն ըստ մոդուլների: Այնուհետև Ժ. Աղասյանը ներկայացրեց յուրաքանչյուր մոդուլի գծով ունկնդրության վիճակն ըստ ֆակուլտետների: Նույնկերպ Ժ. Աղասյանը ներկայացրեց նաև հետազոտական կառուցամասի արդյունքները:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Միմոնյանը հետաքրքրվեց 30 կրեդիտ չհավաքելու հետևանքի մասին: Ժ. Աղասյանը պատասխանեց, որ նման դեպքում սահմանափակվում է ունկնդրի մասնակցությունը պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնի համար անցկացվող մրցույթին:

Որոշեցին. – Ժ. Աղասյանի զեկույցն ընդունել ի գիտություն:

7. **Լսեցին.** – 2014-15 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը հաստատելու մասին: Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը ներկայացրեց անվանական կրթաթոշակի ներկայացված ուսանողների ցուցակը՝ նշելով որ 54 տեղերի գծով ֆակուլտետներից ստացվել է դիմումներ 46 տեղի համար: Դիմումներ չեն ներկայացրել մաթեմատիկայի և մեխանիկայի, ինչպես նաև սոցիոլոգիայի ֆակուլտետները, իսկ տնտեսագիտության ֆակուլտետը հայտ չի ներկայացրել Միտարյանի անվան կրթաթոշակի գծով:

Արտահայտվեցին. – Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ա. Սահակյանը հայտնեց, որ հարցը քննարկվել է ֆակուլտետի գիտխորհրդում և որոշումներն ընդունվել են, հայտի տեղ չհասնելը համարեց պատահականություն՝ համոզմունք հայտնելով ճշտել պատճառը և հայտը ներկայացնել: Ռեկտոր Ա. Միմոնյանը առաջարկեց չներկայացված տեղերի համար հայտերի ներկայացման իրավունքը վերապահել ուսանողական խորհրդին. առաջարկն ընդունվեց:

Որոշեցին. – բաց մնացած տեղերի համար ուսանողական խորհրդի կողմից հայտեր ներկայացնելուց հետո հաստատել 2014-15 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը:

8. **Լսեցին.** – Ընթացիկ հարցեր:

8.1 **Լսեցին.** - ԵՊՀ ձեռներեցության զարգացման կենտրոն ստեղծելու մասին: Պրոռեկտոր Ռ. Մարկոսյանը, հիմնավորելով կենտրոնի ստեղծման անհրաժեշտությունը, մասնավորապես նշեց, որ կենտրոնն ուսանողներին կարող է առաջարկել ձեռներեցության ֆակուլտատիվ դասընթացներ, իրականացնել ձեռներեցության խթանմանն ուղղված տարբեր ծրագրեր: Ըստ բանախոսի, նախաձեռնությունը դեռևս մեկ տարի առաջ քննարկվել է ԱՄՆ միջազգային զարգացման ծրագրի գործակալության հետ:

Արտահայտվեցին. – տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանն առաջարկեց կենտրոնն անվանել ոչ թե ձեռներեցության, այլ ձեռնարկատիրության զարգացման կենտրոն: Առաջակն ընդունվեց:

Որոշեցին. – 1. Ստեղծել ԵՊՀ ձեռնարկատիրության զարգացման կենտրոնը:

2. Հանձնարարել պրոռեկտոր Ռ. Մարկոսյանին եռամսյա ժամկետում գիտխորհրդի քննարկմանը ներկայացնել կենտրոնի կանոնադրությունը:

8.2 Լսեցին. – «Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետ» կառուցվածքային ստորաբաժանումը «Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ» վերանվանելու մասին: Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանը, հիմնավորելով անվանափոխությունը, մասնավորապես նշեց, որ ֆակուլտետը ներկայումս պատրաստում է ն՝ տնտեսագիտության, ն՝ կառավարման ոլորտի մասնագետներ, շնորհելով թե՛ տնտեսագիտության, թե՛ կառավարման բակալավրի և մագիստրոսի աստիճաններ: Նկատի ունենալով, որ երկու մասնագիտությունների ուսումնական պլանները միմյանցից էականորեն տարբերվում են, «տնտեսագիտության ֆակուլտետ» անվանումն ադեկվատ չի արտահայտում երկու մասնագիտությունների առկայությունը:

Արտահայտվեցին. – միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան Գ. Պետրոսյանը նշեց, որ այդ անվանափոխությունը կարող է բացասաբար անդրադառնալ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հանրային կառավարում բաժնում կազմակերպվող ընդունելության գործընթացի վրա:

Բաց քվեարկության արդյունքում՝

Որոշեցին. – «Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետ» կառուցվածքային ստորաբաժանումը վերանվանել «Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ»:

8.3 – Լսեցին. – շնորհավորանքներ ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռուանդ Ավագյանի 70-ամյակի կապակցությամբ: Ռեկտոր Ա. Միմոնյանը, պրոռեկտորներ Գ. Գևորգյանը, Ա. Գրիգորյանը, Ա. Մալխասյանը, ակադեմիկոս Յու. Զիլինգարյանը և այլք հանդես եկան շնորհավորական ելույթներով՝ ներկայացնելով ու բարձր գնահատելով Ռ. Ավագյանի մասնագիտական ձեռքբերումները, նրա ավանդը ֆիզիկայի ֆակուլտետում գիտակրթական գործունեությունը հաջող կազմակերպելու հարցում, ինչպես նաև մատնանշելով Ավագյանի մարդկային բարձր հատկանիշները:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

30.09.2014թ.